***Հոդված 26.*** Օրենքի 39.5-րդ հոդվածի՝

1) 1-ին եւ 2-րդ մասերը շարադրել նոր խմբագրությամբ.

~~«1. Կարգապահական վարույթի գործը փաստաբանների պալատի խորհրդի քննարկմանը նախապատրաստում են փաստաբանների պալատի աշխատակազմի համապատասխան աշխատողները (այսուհետ՝ գործը նախապատրաստող անձ), որոնց թվաքանակը սահմանում է փաստաբանների պալատի խորհուրդը: Գործը նախապատրաստող անձանց փաստաբանների պալատի նախագահի ներկայացմամբ նշանակում է փաստաբանների պալատի խորհուրդը՝ երկու տարի ժամկետով: Գործը նախապատրաստող անձանց լիազորությունները վաղաժամկետ կարող են դադարեցվել փաստաբանների պալատի նախագահի առաջարկությամբ փաստաբանների պալատի խորհրդի կողմից:~~

~~2. Կարգապահական վարույթի գործերի բաշխումը գործը նախապատրաստող անձանց միջեւ կատարվում է փաստաբանների պալատի նախագահի որոշմամբ սահմանված կարգով:».~~